ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ծննդեան 72-երրորդ տարեդարձին Թիֆլիսի հասարակութիւնից 23 հոգի շնորհաւորական հեռագիր ուղարկեցին Երուսաղէմ մեծ հային, ապրիլի 4-ին։ Հետեւեալ օրը «Մուրճ»-ի խմբագրի անունով ստացուեց սրբազան Խրիմեանից հետեւեալ պատասխանը՝

«Շնորհակալ եմ, օրհնում եմ իմ բոլոր զաւակներին։ Խրիմեան»։

Երուսաղէմ ուղարկուած հեռագրի բովանդակութիւնը հետեւեալն էր՝

«Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեանին։ Մեր թանկագին Հայրիկի ծննդեան օրը ջերմ աղօթքներ ենք ուղղում Նախախնամութեանը, որ Նա երկար տարիներ պահպանէ Ձեր թանկագին կեանքը հայոց ազգի և եկեղեցու համար»։

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻ յօբելեանի օրը, ապրիլի 8-ին, մենք ուղարկեցինք Մոսկւա յօբելենական կոմիտեի հասցէով հետեւեալ հեռագիրը.

«Մուրճ»-ի խմբագրութիւնը և խմբագրական խորհուրդը շնորհաւորում են Ձեզ Ձեր յօբելեանով որպէս բանաստեղծի, հրապարակախօսի և դատաւորի. ցանկանում ենք Ձեզ երկար տարիների կեանք մեր նոր գրականութեան և նոր սերնդի համար։ Կեցցէ Շահազիզ»։

Մեծարգոյ յօբելեարից նոյն օրը ստացանք հետեւեալ հեռագրական նամակը՝

Մոսկւա, 9 ապրիլի, 6 ժամ 50 րոպէ երեկոյեան։

«Ապրիլի իններին, իմ գրական և մանկավարժական գործունէութեան 25-ամեակին՝ շատ հիւանդութիւններ, ընկերութիւններ, մամուլի օրգաններ, որպէս նաև առանձին անձեր բարեհաճեցին արժանացնել ինձ ամենաջերմ և զգացած ողջոյնների։ Մանաւանդ թանկ է ինձ այն, որ իմ համեստ անունի հետ կապեցին նաև բարի սկզբնաւորութիւն բարեգործական նպատակով։ Կարելիութիւն չունենալով իւրա-

քանքլուրին առանձնապէս արտայայտել շնորհակալութեանս զգացմունքները, որոնք լցնում են իմ սիրտը, խնդրում եմ Ձեզ, Մեծապատիւ Տէր, յայտնել ամենքին, որոնք ինձ այս օրը յիշեցին, իմ սրտանց ողջոյնը։ Սմբատ Շահ-Ազիզ։

Պր. ՌԱՖԱԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ օգտին ստացանք պ. Աւետիս Զարգարեան-ցից 5 ռուբլի։ Ընդամենը այդ նպատակի համար ունենք մեզ մօտ 10 ռուբլի։

ՎՐԻՊԱԿՆԵՐ. «Մուրճ» № 3 ի երեսի գունաւոր թղթի վերայ տպած է՝ № 2, 1892 թ., ապրիլ. ուղղելու է՝ մարտ։ Այդ սխալը հնար չեղաւ ուղղելու, որովհետև № 3 լոյս տեսաւ Զատկի նախորդ օրը, երբ տպարանում այլ ևս չէին բանում. Սպիտակ երեսի վերայ ուղիղն է տպած։

Ամսւայ քրոնիկի մէջ երես 485, տող 14 տպած է «Նա պատեղ...», պէտք է կարդալ՝ «Նւ պատեղ...»։ Նոյն երես տող 20 տպած է՝ «որոնելով», պէտք է կարդալ «որոշելով» և նոյն երեսում տպած дезинфинцировать պէտք է կարդալ дезинфицировать.

Արտասահմանեան քրոնիկում երես 499 տող 3 ներքևից (ծանօթութեան մէջ) տպած է՝ «Հատիներքն—կենդանի», պէտք է լինի՝ «Հատիներքն—հոգի»։

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ